

Կ-187-24.12.2012-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.	<b>Անձնագրերի հետ կապված հյուպատոսական գործողություններ</b>	Դրույքաչափ
	ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	65
	բ) 16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	30
	գ) օտարերկրյա պետություններում վավերական Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	65
	դ) 16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացուն օտարերկրյա պետություններում վավերական անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	30
	ե) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը մինչև երկու տարի ժամկետով երկարաձգելու համար	10
	զ) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը երկու տարուց ավելի ժամկետով երկարաձգելու համար	20
	է) Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար՝ անձնագրի կորստյան դեպքում, եթե առկա չէ Հայաստանի	30

Հանրապետության քաղաքացու ինքնությունը հավաստող այլ փաստաթուղթ	
ը) ժամկետանց կամ այլ պատճառով օգտագործման համար ոչ պիտանի անձնագրի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը հավաստող այլ փաստաթղթի հիմքով Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	10
թ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	0
ժ) հյուպատոսական հաշվառման վերցնելու համար	0
ժա) հյուպատոսական հաշվառումից դուրս գալու համար	0

2) 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետում՝ «քաղաքացու անձնագիր» բառերից հետո լրացնել «(բացառությամբ կենսաչափական)» բառերը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

**Տեղեկանք-Ամփոփոթերթ**

**«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

<p align="center"><b>Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)</b></p>	<p align="center"><b>Առարկության, առաջարկության բովանդակությունը</b></p>	<p align="center"><b>Եզրակացություն</b></p>
<p align="center">ՀՀ կառավարություն</p>	<p>«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն նորմատիվ իրավական ակտերը կարող են ուժի մեջ մտնել ոչ շուտ, քան «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից: Այդ առումով առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի դրույթները համապատասխանեցնել հիշյալ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է 2013թ. հուլիսի 1-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ դրույքաչափի փոփոխությունն անհրաժեշտ է կիրառել հաշվետու ժամանակահատվածի (եռամսյակի) առաջին օրվանից՝ ապահովելու համար պետական տուրքի գանձման, հաշվառման, հաշվետվողականության և վերահսկման արդյունավետությունը:</p>
<p align="center">ՀՀ կառավարություն</p>	<p>Հանել նախագծի «է» կետը, քանի որ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության 9303 փաստաթղթով սահմանված չափանիշներով թույլ չի տրվում ճամփորդական փաստաթղթերի վավերականության ժամկետի երկարաձգում:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p>